



**Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ
ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԼՎԱԾ ԿԵՆԴԱՆԻ**

- Կենդանիների առողջության վերահսկում, սննդամթերքի անվտանգություն և առողջ բնակչություն

- Հետազոծելիության ապահովում՝ արտադրության ամբողջ շղթայում՝ դաշտից մինչև պատառաքաղ
- Կենդանու բարեկեցություն, ֆերմերների եկամուտների աճ
- Որակյալ և անվտանգ սննդամթերք և առողջ սպառող



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆՃԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ

With funding from
 Austrian
 Development
 Cooperation

CARD
 CENTER FOR
 AGRIBUSINESS &
 RURAL DEVELOPMENT



**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ
ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳ**

Կենդանիների համարակալման և հաշվառման համակարգն ունի կարևոր նշանակություն՝ տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության զարգացման համար:

Կենդանիների համարակալման և հաշվառման համակարգը նպաստում է.

- Անասնապահության և անասնաբուժության զարգացմանը
- Կենդանիների բարեկեցության բարելավմանը
- Հիվանդությունների դեմ պայքարին և համաճարակային իրավիճակի բարելավմանը
- Սննդամթերքի անվտանգությանը
- Արդյունաբերության զարգացմանը

Կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի բացակայությունը խոչընդոտում է.

Անասնապահության և անասնաբուժության ոլորտների արդյունավետ կառավարմանը

Մարդկանց և կենդանիների հիվանդությունների դեմ պայքարին

Տեղական սննդամթերքի արտադրությանը և արտահանմանը

Անասնապահության ոլորտների վարկավորմանը

Ֆերմերների եկամուտների աճին

Ճշգրիտ վիճակագրությանը



ԻՆՉՈՐ՝ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Կառավարել կարելի է այն, ինչի մասին ունես ստույգ տեղեկություն

Համարակալման և հաշվառման համակարգի ներդրման նպատակն է կենդանիների վերաբերյալ ստույգ տեղեկությունների հավաքագրումը: Կենդանու կյանքի ընթացքում հավաքագրված տվյալները թույլ կտան բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը

Կենդանու բարեկեցությունից կախված է մարդու բարեկեցությունը

Համարակալման և հաշվառման համակարգը թույլ կտա վերահսկել և կանխել կենդանիների միջոցով և սննդով փոխանցվող հիվանդությունների տարածումը: Մարդկանց հիվանդությունների 60% ընդհանուր են մարդկանց և կենդանիների համար:

Անհայտ ծագման և ցածր որակ ունեցող հումքից հնարավոր չէ ստանալ բարձրարժեք սննդամթերք

Համարակալման և հաշվառման համակարգը անհրաժեշտ է կենդանական ծագման հումքի հետազոծելիության ապահովման համար:

